## HOW WILL THE PROJECT WORK?

- Through regular exchanges with the Project stakeholders to identify practical challenges and accordingly develop tailor-made methodologies;
- Through a combination of technical expertise and participatory working groups with beneficiary institutions to develop tailor-made training materials, action plans, monitoring practices, and legislative advice, etc.
- Through tailored on-the-job trainings and implementation of pilot programmes targeting prisoners.

## HOW MUCH WILL IT COST?

- The total budget of the Project is 750 000 Euros.
- The Project is a part of the Council of Europe Action Plan for Armenia 2019-2022 that has been adopted by the Committee of Ministers on 9 January 2019. This third Action Plan is a strategic programming instrument which aims to accompany, through co-operation, Armenia in its efforts to further bring legislation, institutions and practice in line with European standards in the areas of human rights, the rule of law and democracy, and, through this, to support the country in honouring its obligations as a Council of Europe member state. In meeting its objectives, the Action Plan will contribute to the implementation of the UN 2030 Agenda for Sustainable Development.

## HOW DO WE GET MORE INFORMATION?

| | |
|---|---|
| Criminal Law Co-Operation Unit of the Council of Europe | www.coe.int/en/web/criminal-law-coop |
| Council of Europe Office in Yerevan | www.coe.int/en/web/yerevan |
| Enhancing Health Care and Human Rights Protection in Prisons in Armenia | https://www.coe.int/en/web/yerevan/enhancing-health-care-and-human-rights-protection-in-prisons-in-armenia |
| Diana Ghazaryan, Senior Project Officer | Diana.GHAZARYAN@coe.int |

The Council of Europe (CoE) is the leading European intergovernmental organisation with an extensive and recognised standing in the area of protection of the human rights of persons deprived of liberty. The work in these areas is based on the established synergy between the CoE standards, the monitoring mechanisms put in place to supervise their implementation by the Member States and the technical assistance activities provided to assist countries in need to improve the application of these standards within their prisons and probation services, inter alia the detention conditions and the treatment of inmates.

Եվրոպայի խորհուրդը (ԵԽ) առաջատար եվրոպական միջկառավարական կազմակերպություն է, որը լայն և ընդունելի դերակատարում ունի ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում: Այս ոլորտում գործունեությունը հիմնված է ԵԽ չափանիշների, դրանց իրականացումը վերահսկելու նպատակով անդամ պետություններում ներդրված մշտադիտարկման մեխանիզմների և քրեակատարողական ու պրոբացիոն ծառայություններում (այդ թվում՝ ազատազրկման պայմանների և ազատությունից զրկված անձանց բուժման առնչությամբ) այս չափանիշների կիրառումը բարելավելու կարիք ունեցող պետություններին տրամադրվող տեխնիկական աջակցություն ապահովող գործողությունների միջև փոխգործակցության վրա:

www.coe.int

Council of Europe
Directorate General of Human Rights and Rule of Law (DGI)
Criminal Law Co-Operation Unit

Council of Europe Office in Yerevan
Erebuni Plaza, 6th floor, 26/1 V.Sargsyan str.,
Yerevan 0010, Armenia
http://www.coe.am

Եվրոպայի խորհուրդ
Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինություն
Քրեական իրավունքի հարցերով համագործակցության ստորաբաժանում

Եվրոպայի խորհրդի գրասենյակ Երևանում
Էրեբունի Պլազա, Վազգեն Սարգսյան փողոց 26/1, 6-րդ հարկ
Երևան 0010, Հայաստանի Հանրապետություն
http://www.coe.am



# ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

# ENHANCING HEALTH CARE AND HUMAN RIGHTS PROTECTION IN PRISONS IN ARMENIA



www.coe.int

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

## Ո՞ՐՆ Է ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագիրը կաջակցի ազգային իշխանություններին բարեփոխել Հայաստանում ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման ոլորտի իրավակարգավորումները և դրանց գործառնական կիրառումը՝ Եվրոպայի խորհրդի չափանիշներին համապատասխան:

## Ո՞ՐՆ Է ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

- Բարելավել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող ազատությունից զրկված անձանց հետազոտման, բուժման և խնամքի ապահովման պայմանները՝ հաշվի առնելով նրանց հատուկ կարիքները
- բարելավել կանխարգելիչ առողջապահությունը՝ մասնավորապես սանիտարահամաճարակային և հիգիենիկ պայմանները
- առողջապահական ծառայությունում ներդնել այնպիսի նոր տեխնոլոգիաներ, ինչպիսիք են՝ հեռաբժշկությունը և բժշկական գրառումների էլեկտրոնային տվյալների շտեմարանը
- ապահովել Քրեակատարողական բժշկության կենտրոնի գործունեության արդյունավետությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը

Ծրագիրը կանդրադառնա նաև խոշտանգումների, վատ, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դրսևորումների պատշաճ փաստաթղթավորմանը և զեկուցմանը:

Ծրագիրը կազմվել է հիմք ընդունելով ԵՄ/ԵԽ համատեղ «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում» (2015 – 2018թթ.) նախորդ Ծրագրի արդյունքները:

## ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

- Ծրագրի գործընկերները և շահառուներն են Արդարադատության նախարարությունը, Առողջապահության նախարարությունը, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը, քաղաքացիական հասարակության այն կազմակերպությունները, որոնք ծառայություններ են մատուցում քրեակատարողական հիմնարկներում և այլ փակ հաստատություններում գտնվող անձանց
- թիրախային խմբերն են քրեակատարողական համակարգի բժշկական և ոչ բժշկական անձնակազմը
- վերջնական շահառուները քաղաքացիներն են և լայն առումով՝ հասարակությունը

## ԻՆՉՊԵ՞Ս Է ԻՐԱԳՈՐԾՎԵԼՈՒ ԾՐԱԳԻՐԸ

- Ծրագրի շահառուների միջև կանոնավոր փոխգործակցության միջոցով նախանշել գործնականում հանդիպող մարտահրավերները և համապատասխանաբար մշակել հարմարեցված մեթոդաբանություն:
- Տեխնիկական փորձագիտական և մասնակցային աշխատանքային խմբերի համադրման միջոցով շահառու հաստատությունների հետ մշակել հարմարեցված վերապատրաստման դասընթացների նյութեր, գործողությունների ծրագրեր, մշտադիտարկման ընթացակարգեր, տրամադրել իրավական խորհրդատվություն և այլն:
- Աշխատանքի հետ համատեղ իրականացնել հատուկ մշակված դասընթացներ և պիլոտային ծրագրեր, որոնց թիրախային խումբը ազատությունից զրկված անձինք են:

## ՈՐՔԱ՞Ն ԿԱՐԺԵՆԱ ԾՐԱԳԻՐԸ

- Ծրագրի ընդհանուր բյուջեն 750 000 եվրո է:
- Ծրագիրը Նախարարների կոմիտեի կողմից 2019թ-ի հունվարի 9-ին ընդունված Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար 2019-2022թթ. գործողությունների ծրագրի բաղկացուցիչ մասն է: Գործողությունների երրորդ ծրագիրը ռազմավարական ծրագրավորման փաստաթուղթ է, որի նպատակն է համագործակցության միջոցով աջակցել՝ մարդու իրավունքների, իրավունքի գերակայության և ժողովրդավարության ոլորտներում օրենսդրությունը, հաստատությունները և պրակտիկան եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելուն ուղղված Հայաստանի ջանքերին և այդպիսով օժանդակել՝ որպես Եվրոպայի խորհրդի անդամ պետություն իր պարտավորությունների կատարմանը: Իր նպատակներն իրագործելով՝ Գործողությունների ծրագիրը կնպաստի ՄԱԿ-ի 2030թ.-ի Կայուն Զարգացման Օրակարգի իրականացմանը:

## ԻՆՉՊԵ՞Ս ՍՏԱՆԱԼ ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Եվրոպայի խորհրդի քրեական իրավունքի հարցերով համագործակցության ստորաբաժանում | www.coe.int/en/web/criminal-law-coop |
| Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակ | www.coe.int/en/web/yerevan |
| Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում | https://www.coe.int/en/web/yerevan/enhancing-health-care-and-human-rights-protection-in-prisons-in-armenia |
| Դիանա Ղազարյան, Ծրագրի ղեկավար | Diana.GHAZARYAN@coe.int |

## WHAT IS THE OVERALL GOAL?

The Project will assist the national authorities in reforming regulatory and operational framework of healthcare provision for inmates in Armenia in line with the Council of Europe standards.

## WHAT DO WE EXPECT TO ACHIEVE?

- Improve screening, treatment and provision of care to address specific needs of prisoners with mental disorders;
- Strengthen preventive healthcare, particularly sanitary-epidemiological and hygienic conditions;
- Introduce new technologies in healthcare services, such as telemedicine and electronic database system of medical records;
- Ensure effectiveness, transparency and accountability of the Penitentiary Medicine Center.

The Project will also address the proper documentation and reporting on indications of torture, ill-treatment, inhumane and degrading treatment.

This Project builds on the results of a previous EU/CoE Project "Strengthening Healthcare and Human Rights Protection in Prisons in Armenia" (2015 – 2018).

## WHO BENEFITS FROM THE PROJECT?

- Project partners and stakeholders: Ministry of Justice, Ministry of Health, Ombudsman, civil society organisations that provide services to persons in prisons and other closed institutions
- Target groups: penitentiary medical and non-medical staff
- End beneficiaries: citizens and society at large